ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՄԱՆ

Երևան 2019

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....4

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 7

ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ և ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ 10

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ և ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 12

ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....18

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 20

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 23

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ և ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 29

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 31

ՏԱՐԵՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 36

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ.....38

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ.....39

Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդման սեղմագիրը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով (ԱՄՆ ՄԶԳ): Սեղմագրի բովանդակության համար պատասխանատու են միմիայն հեղինակները և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2019թ. հրապարկվել է Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների Պաշտպանի Տարեկան հաղորդումը, որում ներկայացվել է 2018 թվականի ընթացքում Պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության վիճակի մասին համապարփակ տեղեկատվություն: Տարեկան հաղորդման մեջ մանրամասն անդրադարձ է կատարվել Պաշտպանի գործունեության իրավական հիմքերին, սկզբունքներին, գործունեության եւ ռազմավարական զարգացման ուղղություններին: Համապարփակ կերպով ներկայացվել է նաեւ տեղեկատվություն մարդու իրավունքների տարբեր ոլորտների եւ առանձին խումբ անձանց իրավունքների մասին:

Սակայն Տարեկան հաղորդումը բավականին ծավալուն է, կազմում է մոտ 700 էջ, որի պատճառով զեկույցն ամբողջությամբ կարող է դժվարամատչելի լինել շատ քաղաքացիների համար: Այդ նպատակով Պաշտպանի նախաձեռնությամբ որոշվեց կազմել նաև Տարեկան հաղորդման համառոտ տարբերակը: Արդյունքում, մշակվեց սույն փաստաթուղթը՝ հաղորդման ամփոփ տարբերակը, որն իր կարճ ծավալով էապես դյուրին է դարձնում դրա օգտագործումը յուրաքանչյուրի համար: Համառոտ տարբերակում ներառված են թե՛ 2018 թվականի ընթացքում Պաշտպանի գործունեությանը վերաբերող տեղեկությունները, թե՛ մարդու իրավունքների տարբեր ոլորտներին եւ առանձին խումբ անձանց իրավունքներին վերաբերող Պաշտպանի առաջարկությունների մասին տեղեկություններ:

Տարեկան հաղորդման այս տարբերակը կնպաստի հասարակության շրջանում Պաշտպանի գործունեության վերաբերյալ իրազեկման բարձրացմանը եւ, ընդհանուր առմամբ, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության վիճակի բարելավմանը:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պաշտպանի գործունեությունը բաղկացած է երեք հիմնական ուղղություններից՝

- անհատական դեպքերի քննարկում
- համակարգային խնդիրների լուծմանն ուղղված քայլեր
- հանրության շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված գործողություններ

Անհատական դիմումներից վերհանված խնդիրների առթիվ համակարգային և կանխարգելիչ մոտեցումն ընդգրկում է՝

1. օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակումը

2. օրենքների, օրենսդիր և գործադիր մարմինների որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի Սահմանադրության **2**-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով Սահմանադրական դատարան դիմումի հասցեագրումը

3. մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունումը դրանց վերաբերյալ իրավասու մարմին գրավոր կարծիքների տրամադրումը

4. Սահմանադրական դատարանում քննվող՝ մարդու իրավունքներին վերաբերող դիմումների վերաբերյալ հատուկ կարծիքների ներկայացումը

2018 թվականի ընթացքում օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում

- Ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության կատարելագործում
- Կալանավորված անձանց տեսակցությունների և հեռախոսային խոսակցությունների նկատմամբ արգելքի համակարգի բարեփոխում
- Փաստաբանի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու քրեականացում
- Սահմանադրական դատարանի որոշումներում արձանագրված օրենսդրական բացերի ու թերությունների վերացում
- Ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի (տոտալիզատոր) գովազդի սահմանափակում

Իրավական ակտերի Սահմանադրության համապատասխանության հարցերով Սահմանադրական դատարան դիմումի հասցեագրում

- Պատժախուց տեղափոխված կալանավորված անձանց և դատապարտյալների արտաքին աշխարհի հետ կապից զրկման սահմանադրականության վերաբերյալ
- Գործարար կազմակերպությունների սեփականության իրավունքի իրացման խոչընդոտների սահմանադրականության վերաբերյալ
- Համաներման մասին օրենքի որոշ դրույթների սահմանադրականության վերաբերյալ


Պաշտպանի համագործակցությունը
իրավասու պետական մարմինների,
հասարակական և
միջազգային կազմակերպությունների հետ
ՀՀ Ազգային ժողով. Պաշտպանի հատուկ ներկայացուցիչ
ՀՀ Սահմանադրական դատարան. հատուկ կարծիքի ներկայացում, Պաշտպանի հատուկ ներկայացուցիչ
Մարդու իրավունքների եվրոպական դատարան. ներգրավվում որպես երրորդ կողմ
Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե. Պաշտպանի հատուկ դիրքորոշում ՀՀ դեմ ՄԻԵԴ դատական ակտի կատարման մասին

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ




2822
725
675
622
574
442
408
401
399
377
60
2450
Ոստիկանություն (26.24%)
Երևանի քաղաքապետարան (6.74%)
Քրեակատարողական ծառայություն (6.28%)
Դատական իշխանության մարմիններ (5.78%)
Աշխատանքի և սոցիալական .. (5.34%)
Առողջապահության նախարարություն (4.11%)
Հանրային ծառայության ոլ.. (3.79%)
Հարկադիր կատարումն ապահ.. (3.73%)
Պաշտպանության նախարարություն (3.71%)
Համայնքապետարաններ (3.51%)
Քննչական կոմիտե (3.04%)
Մարզպետարաններ (1.60%)
Արդարադատության նախարար.. (1.05%)
Կրթության և գիտության ն.. (0.97%)
Դատախազություն (0.77%)
Պետական եկամուտների կոմիտե (0.56%)
Այլ մարմիններ և կազմակե.. (22.78%)


2014-2018 թթ այցերի համեմատական պատկեր
900
800
700
600
500
400
300
200
100
0
458
586
415
614
864
2014-2018
2014
2015
2016
2017
2018

2018 թվականին իրականացված այցերի ընդհանուր քանակը՝864



2014-2018 թթ ընդհանուր բողոքների համեմատական վիճակագրական պատկեր

2014-2018 թթ ընթացքում դրական լուծված գործերի համեմատական պատկեր

ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ և ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Տեղեկատվության ազատությունը և իրավակիրառ պրակտիկան

Մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար ստանում է դիմումներ քաղաքացիներից, այդ թվում նաև լրագրողներից՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղեկատվության ազատության իրավունքի խախտումների վերաբերյալ:



2018 թվականի դրությամբ Պաշտպանի աշխատակազմին ուղղված դիմումների քանակը կրկնապատկվել է:

Դիմումների հիմնական հասցեատերերն են Ոստիկանությունը, Պաշտպանության նախարարությունը, Առողջապահության նախարարությունը և Երևանի քաղաքապետարանը:

Առավել հաճախ խախտվել է օրենքով սահմանված ժամկետում տեղեկատվություն տրամադրելու օրենքի պահանջը:

Տեղեկատվության տրամադրումը հաճախ մերժվել է նաև տեղեկության մեջ անձնական կյանքի մասին տվյալների առկայության հիմնավորմամբ:

Կարևոր է

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, տեղեկությունը տրամադրվում է մնացած մասի վերաբերյալ: Հետևաբար, նույնիսկ եթե հայցվող տեղեկության մեջ առկա են անձնական տվյալներ, տեղեկատվությունը բոլոր դեպքերում պետք է տրամադրվի, իսկ այդ տեղեկության մեջ առկա անձնական տվյալները պետք է ծածկվեն:

Սոցիալական ցանցերում վիրավորանքի, արժանապատվությունը վիրավորող ու ատելության խոսքը

Սոցիալական ցանցերում ազատ խոսքի զարգացումները, ու հատկապես

ատելության և արժանապատվությունը նվաստացնող խոսքի դրսևորումները, մշտապես գտնվում են Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում:

2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը իրականացրել է ծավալուն ուսումնասիրություն, որով արձանագրվել է սոցիալական ցանցերում խտրականության և անհանդուրժողականության խոսքի զգալի աճ:

Արձանագրվել են.

ատելության քարոզ

անհանդուրժողականություն

թշնամանքի հրահրում

բռնության արդարացում

Հասարակական տարբեր խմբերին.

միմյանցից բաժանելու

միմյանց հակադրելու 

կոչեր և արդարացումներ:

Առաջարկություն

Լայնամասշտաբ արշավներ իրականացնել ատելության խոսքի, դրա բացասական ազդեցության և այլակարծության նկատմամբ հարգանքի անհրաժեշտության վերաբերյալ:

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ և ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Ազատությունից զրկված անձանց նվազագույն իրավունքները և դրանց գործնական ապահովումը

Անձին ազատությունից զրկելիս կարևոր է, որ ապահովվեն նրա նվազագույն հիմնական իրավունքները, որոնք հետևյալն են.

1. Անհապաղ տեղեկացնել ազատությունից զրկելու պատճառների մասին՝ իրեն հասկանալի լեզվով
2. Պահպանել լռություն
3. Իրեն ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը
4. Հրավիրել փաստաբան
5. Իր պահանջով ենթարկվել բժշկական զննման, այդ թվում՝ իր նախընտրած բժշկի կողմից
6. Ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկել և դատարանի կողմից ազատ արձակվել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

Վերը նշված իրավունքները պրակտիկայում խախտվում են՝ հատկապես վարչական իրավախախտման վարույթի ներքո ազատությունից զրկելիս, որի շրջանակներում կիրառվում են «*խախտողի բերում*», «*վարչական ձերբակալում*», «*բերման ենթարկում*» ընթացակարգեր: Հաճախ փաստացի բերման ենթարկելը ներկայացվում է որպես ոստիկանության բաժին «հրավիրել»: Տարածված է պատճառաբանությունը, որ բերման ենթարկելու որոշում չի կայացվել, եթե անձին հրավիրել են բաժին օպերատիվ միջոցառում իրականացնելու շրջանակներում:

Կարևոր է

Վերը նշված դեպքերը նույնպես պետք է համարվեն ազատությունից զրկում, և այդ անձինք պետք է օժտվեն վերը նշված իրավունքներով ու դրանք ապահովող երաշխիքներով: Սա պետք է դառնա իրավապահ մարմինների գործունեության սկզբունք: Ինչ վերաբերում է «օպերատիվ միջոցառումներ իրականացնելուն», ապա նման պրակտիկան պետք է բառացել:

Առաջարկություններ

- *Օրենսդրորեն ամրագրել վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու հստակ և որոշակի ընթացակարգեր:*
- *Ամբողջովին ներդնել ազատությունից զրկման միասնական համակարգ՝ անկախ իրականացվող վարույթի տեսակից*
- *Համապատասխան փոփոխություններ կատարել Ոստիկանության գործունեության ներքին կանոնակարգման ակտերում: Ոստիկանության՝ քաղաքացիների հետ անմիջականորեն շփվող ծառայողների վերապատրաստումն իրականացնել այնպես, որ յուրաքանչյուր ոստիկան տիրապետի քաղաքացիների նվազագույն իրավունքներին ու դրանց թղթակցող իր պարտականություններին:*

Ազատությունից զրկված անձի՝ փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովումը և փաստաբանների մասնագիտական գործունեության երաշխիքները

Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է բողոքներ վստահորդին տեսակցելու նպատակով ազատությունից զրկման վայր՝ քրեակատարողական հիմնարկ կամ Ոստիկանության համապատասխան բաժին փաստաբանի մուտքը խոչընդոտելու դեպքերի մասին: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ անձանց բերման են ենթարկել քննչական բաժին և փաստաբանին չեն թույլատրել հանդիպել նրանց հետ: Նման դեպքերը բարձրացնում են փաստաբանի մատչելիության իրավունքի հարց, որն առանցքային էի իրավունքի գերակայության ապահովման գործում:

Կարևոր է

2018 թվականին Պաշտպանի առաջարկությամբ Քրեական օրենսգրքում կատարվեց կարևոր փոփոխություն, որով ամրագրվեց դրույթ, ըստ որի մինչև ձերբակալման արձանագրությունը անձին հայտարարելն արգելանքի վերցված անձն իրավունք ունի փաստաբան հրավիրելու :

Պաշտպանը դեռ 2017 թվականին մշակել և շրջանառության մեջ է դրել Քրեական օրենսգրքի փոփոխությունների նախագիծ, որը ներկայացվում է ստորև:

Առաջարկություններ

- *ՀՀ քրեական օրենսգրքի 332[3]-րդ հոդվածի 1-ին մասը ենթարկել այնպիսի փոփոխության, որով այս հանցակազմի սուբյեկտ պաշտոնատար անձից բացի կհամարվի ցանկացած այլ այնպիսի անձ, ով խոչընդոտել է փաստաբանի օրինական գործունեությանը,*
- *ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածով պաշտոնատար անձի կողմից փաստաբանի կամ նոտարի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար նախատեսված պատժաչափը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ և 319-րդ հոդվածներին՝ խստացնելով փաստաբանի գործունեությանը խոչընդոտելու համար նախատեսված սանկցիան,*
- *նշված հոդվածը լրացնել նոր մասով, որը պատասխանատվություն կնախատեսի փաստաբանի գործունեությունը խոչընդոտելու համար, եթե դա դրսևորվել է իր վստահորդին տեսակցելու նպատակով՝ ազատությունից զրկման ցանկացած վայր փաստաբանի մուտքն ապօրինի չթույլատրելով:*

Քրեական գործի շրջանակներում մեղադրյալին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա դրվող կալանքի պրակտիկան

2018 թվականի ընթացքում Պաշտպանը ստացել է բողոքներ նախաքննության ընթացքում մեղադրյալին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա դրվող **անհամաչափ** կալանքների մասին, մասնավորապես, երբ կալանքը դրվել է մեղադրյալի ամբողջ գույքի վրա՝ առանց հաշվի առնելու ենթադրյալ հանցագործությամբ պատճառած իրական վնասի չափը:

Կարևոր է

Մեղադրյալի գույքի կամ դրամական միջոցների վրա կալանք սահմանելիս, նախաքննական մարմինները պարտավոր են առաջնորդվել համաչափության սկզբունքով, այն է՝ կալանքի նպատակները փոխհավասարակշռել մեղադրյալի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի հետ:

Քրեական գործի շրջանակներում մեղադրյալի, տուժողի, վկայի անձնագիրը վերցնելը և տեղաշարժի ազատության սահմանափակումը

2018 թվականի ընթացքում Պաշտպանը անդրադարձել է մի տարածված պրակտիկայի, ըստ որի՝ քրեական վարույթ իրականացնող մարմինները ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացնելիս անձի անձնագիրը չեն վերադարձնում մինչև քրեական հետապնդման դադարեցումը: Դրա արդյունքում, հաճախ, խափանման միջոցը վերացվելուց կամ նույնիսկ պատիժը կրելուց հետո էլ ՍԷԿՏ (Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական) համակարգում դեռ շարունակում է պահպանվել հանրապետությունից դուրս գալու արգելքը: Պաշտպանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը արտահայտել է հետևյալ դիրքորոշումները.

Կարևոր է

ՀՀ Սահմանադրական դատարան ***(ՍԴՈ-1360)***	***Անձնագիրը կասկածյալից կամ մեղադրյալից կարող է վերցվել բացառապես խափանման միջոցի կիրառման դեպքում: Եվ խափանման միջոցի վերացման պահին անձի անձնագիրը ենթակա է անհապաղ վերադարձման:*** ***Ներկայումս ձևավորված պրակտիկան, երբ անձի անձնագիրը պահվում է իրավասու մարմնի մոտ «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցը վերացնելու դեպքում, խախտում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անձի ազատ տեղաշարվելու իրավունքը:*** ***Հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից անձնագրի փոխարեն անձը հաստատող փաստաթուղթ պետք է տրվի կալանքի տակ չգտնվող այն կասկածյալներին և մեղադրյալներին, ում նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:***

Չնայած Սահմանադրական դատարանի որոշմանը, դեռ չի ձևավորվել միասնական իրավակիրառ պրակտիկա:

Առաջարկություններ

- *Ապահովել ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի վերացման վերաբերյալ տեղեկությունների պարտադիր տրամադրումը ՍԷԿՏ համակարգին:*
- *Հնարավորին սեղմ ժամկետում ընդունել օրենսդրական կարգավորումներ՝ հստակ ամրագրելով իրավասու մարմնի կոնկրետ պարտականությունը նաև այն դեպքերում, երբ արգելանքը վերացվում է դատաքննության փուլում, ինչպես նաև պատժի կրումից հետո:*
- *Բացառել քրեական գործով վարույթի ընթացքում խափանման միջոցի կիրառման շրջանակներից դուրս կասկածյալի և մեղադրյալի անձնագիր վերցնելու կամ պահելու պրակտիկան:*
- *Ամրագրել ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելիս դրա փոխարեն անձը հաստատող փաստաթուղթ տրամադրելու օրենսդրական պահանջ և դրա ապահովմանն ուղղված ընթացակարգեր:*

Անձնագիրը վերցնելու և ՍԷԿՏ համակարգի կիրառմամբ անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը կիրառվում է նաև տուժողի և վկայի կարգավիճակ ունեցող անձանց նկատմամբ:

Կարևոր է

Քրեական գործով վարույթին որպես վկա կամ տուժող հանդես եկող կամ դատավարական կարգավիճակ չունեցող անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը որևէ դեպքում չի կարող սահմանափակվել՝ վերջինիս անձնագիրը վերցնելու կամ ՍԷԿՏ համակարգով հանրապետությունից դուրս գալու արգելքի հիման վրա. դրա օրենսդրական հիմքերը բացակայում են: Նմանատիպ ցանկացած խախտում պետք է օրենսդրությամբ սահմանված կարգով առաջ բերի պատասխանատու պաշտոնատար անձի պատասխանատվության հարց:

Քրեական գործով վարույթի շրջանակներում որպես իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականությանն անհամաչափ միջամտությունը

Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է բողոքներ այն մասին, որ վարույթն իրականացնող մարմինները պատշաճ ջանասիրություն չեն ցուցաբերել իրենց ի պահ տրված գույքի խնամքի կամ ողջամիտ ժամկետների պահպանման ուղղությամբ:

Օրինակ

Քրեական վարույթի շրջանակներում իրեղեն ապացույց ճանաչված իր տրանսպորտային միջոցը քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելու պատճառաբանությամբ ի պահ չի հանձնվել քաղաքացուն, տրանսպորտային միջոցը պահվել է բաց տարածքում, առանց ծածկի, առկա չեն եղել տեսախցիկներ, իսկ տարածքը ցանկապատված չի եղել:

Մեկ այլ դեպքում, թեև տրանսպորտային միջոցը ի պահ է հանձնվել սեփականատիրոջը, սակայն շուրջ հինգ ամիս նշանակված փորձաքննության եզրակացությունը չի ստացվել, որպես հետևանք՝ անձը չի կարողացել ապահովագրական ընկերությունից փոխհատուցում ստանալ, վերանորոգել այն և օգտագործել իր ամենօրյա աշխատանքում:

Առաջարկություն

Նման խնդիրները կարող են լուծվել, եթե վարույթն իրականացնող մարմինների կողմից ցուցաբերվի բավարար ջանասիրություն և բարեխղճություն՝ իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականության հետ կապված քննչական և այլ դատավարական գործողությունները ողջամիտ ժամկետներում իրականացնելու և գույքը սեփականատիրոջ տիրապետմանը վերադարձնելու պարտականության ապահովման ուղղությամբ:



Հարկադիր կատարման ծառայության կայացրած որոշումներն օրենքով սահմանված կարգով քաղաքացիներին չծանուցելը

Պետք է բարձրացնել կատարողական վարույթի կողմերին ծանուցելու ընթացակարգերի արդյունավետությունը: Հաճախ քաղաքացիները անձամբ, փոստով չեն ծանուցվում հարկադիր կատարողի կայացրած որոշումների մասին, սակայն ձևական առումով համարվում է, որ նրանք պատշաճ ծանուցված են էլեկտրոնային նամակով կամ բջջային հեռախոսին կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

Կարևոր է

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն, անձը պարտավոր չէ վարչական ակտի ընդունման մասին տեղեկանալ պաշտոնական տեղեկագրից (էլեկտրոնային եղանակով), այլ պետք է անձամբ ծանուցվի իր նկատմամբ կայացված վարչական ակտի և հարուցված վարչական վարույթի մասին

Կարևոր է

Անկախ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին կամ բջջային հեռախոսին կարճ հաղորդագրություն ուղարկելու ձևից, հարկադիր կատարողի որոշումներն ու ծանուցումներն անհրաժեշտ է ուղարկել նաև պատվիրված նամակով:

Դատական ակտերի չկատարելը վարչական մարմինների կողմից

Արձանագրվել են դեպքեր, երբ վարչական մարմինները օրինական ուժի մեջ մտած դատական ակտը անվերապահորեն կատարելու փոխարեն ձեռնամուխ են եղել դատական ակտի բովանդակությունը մեկնաբանելուն՝ դրանով քաղաքացու համար սահմանելով հավելյալ պարտականություններ, որոնք չեն բխում դատական ակտից:

Օրինակ

Մի գործով քաղաքացին անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե է ներկայացրել միջանկյալ դատական ակտ, որով ամրագրված է եղել գույքի նկատմամբ կիրառված բոլոր արգելանքներն ու սահմանափակումները վերացնելուն ուղղված պահանջ: Սակայն կոմիտեի պաշտոնատար անձը հրաժարվել է կատարել սահմանափակումների վերացման մասին պետական գրանցում, այսինքն՝ կատարել դատական ակտը, պատճառաբանելով, որ տվյալ դեպքում դատական ակտը չէր կարող կատարվել, քանի դեռ սնանկության գործով վերջնական դատական ակտ՝ վճիռ չէր կայացվել դատարանի կողմից:

Կարևոր է

Դատական ակտերը ենթակա են անվերապահ կերպով կատարման: Որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, մասնավոր կամ պաշտոնատար անձ, քաղաքական, հասարակական գործիչ, և այլն, իրավունք չունի դատական ակտը մեկնաբանել այնպես, որ հրաժարվում է դրա կատարումից:

Կարևոր է

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն ընդամենը գույքի նկատմամբ ծագած իրավունքները գրանցող պետական մարմին է և չի կարող անձանց համար սահմանել օրենքով չնախատեսված փաստաթղթեր կամ հիմնավորումներ ներկայացնելու պարտականություններ՝ դրանով իսկ հրաժարվելով կատարել դատական ակտը:

Մարդու իրավունքների պաշտպանությունը զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման ընթացքում

Պաշտպանի առաջարկի հիման վրա կառավարությունը ընդունել է Կարգ, ըստ որի զինվորական կոմիսարիատը փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցելու է անձանց զինվորական կոմիսարիատ ներկայանալու մասին՝ նշելով ներկայանալու համար կոնկրետ ժամկետ:

Փաստաթղթային եղանակով ծանուցումն իրականացվում է քաղաքացուն ծանուցագիրն առձեռն հանձնելու, իսկ էլեկտրոնային եղանակով ծանուցումը՝ քաղաքացու կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին ծանուցագիրն ուղարկելու միջոցով:

2018 թվականի ամառային զորակոչի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում մշակվել է զորակոչիկների իրավունքների վերաբերյալ տեղեկատվական թերթիկ:

Զինապարտ քաղաքացիների և զինծառայողների պատշաճ բժշկական օգնություն ստանալու և առողջության պահպանման իրավունք

2018 թվականի ընթացքում զինապարտ քաղաքացիների և նրանց ընտանիքների անդամների կողմից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների մեծ մասը վերաբերել է զինապարտ քաղաքացիների պատշաճ բժշկական հետազոտություն և փորձաքննություն անցնելու իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներին:

Հաջողված պատմություն

Զորակոչիկի մոտ առկա է եղել «Լեղապարկի պոլիպներ» հիվանդությունը, Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից անցել է փորձաքննություն և սահմանափակումով պիտանի ճանաչվել զինվորական ծառայության համար: Բողոքարկման արդյունքում նշանակվել է վիրահատական բուժում, սակայն բժշկական կենտրոնի կողմից այն չի իրականացվել: Գրությամբ՝ Պաշտպանն առաջարկել է կազմակերպել արդեն ծառայության մեջ գտնվող քաղաքացու վիրահատական բուժումը, և իրականացնել առողջական վիճակի փորձաքննություն: Արդյունքում՝ զինծառայողը ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

Առաջարկություններ.

- Առողջական վիճակի վերաբերյալ գանգատի դեպքում անհապաղ իրականացնել զինծառայողի պատշաճ հետազոտությունը և բուժումը:
- Միջոցներ ձեռնարկել, որպեսզի զինվորական ծառայության ընթացքում զինծառայողի նկատմամբ նշանակված բուժումը փաստացի իրականացվի:
- Մշակել պլանային վիրահատությունների ժամանակացույց, ինչպես նաև զինծառայողների հաշվառման կարգ:
- Միջոցներ ձեռնարկել անհրաժեշտ դեղորայքը (հատկապես՝ ցավազրկող և ջերմիջեցնող) զորամասերին ժամանակին տրամադրելու ուղղությամբ:

Զինծառայողների իրավունքների պաշտպանությունը կարգապահական վարույթի ընթացքում

Կարգապահական վարույթի ընթացքում զինծառայողների իրավունքներն ապահովելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկել է ձեռնարկել հետևյալ միջոցները.

Առաջարկություններ.

- Զինծառայողին ծանոթացնել իր իրավունքներին ու պարտականություններին:
- Հաշվի առնել զինծառայողների պատասխանատվ. մեղմացնող և ծանրացնող հանգամանքները;
- Հրամաններում նշել տույժի տեսակն ընտրելու մասին:
- Վերլուծել կարգապահական խախտումների պահանջները:
- Ապահովել կարգապահական տույժերը բողոքարկելու զինծառայողների իրավունքը:

Որպեսզի «Հրամանը չկատարել կամ ոչ պատշաճ կատարել» հրամանը համարվի օրինական, այն պետք է ուղղված լինի մեկ զինծառայող, զինծառայողների խմբին կամ զորամասին (ստորաբաժանմանը):

Պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանները չկատարելը չի կարող հանգեցնել նշված զանցանքի կատարմանը, քանի որ դրանք վարքագծի կանոններ են սահմանում բոլոր զինծառայողների համար:

Կարգապահական կանոնագրքում սպայի պատվի կանոնները խախտելը որպես կարգապահական տույժ սահմանված լինելն ինքնին բավարար չէ այդ կանոնները խախտելը «Հրաման չկատարել կամ ոչ պատշաճ կատարել»:

Կանանց նկատմամբ խտրականության և բռնության բացառում

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը 2018 թվականի ընթացքում իրականացրել է վերապատրաստումներ, որոնց մասնակցել են դատավորներ, քննիչներ, դատախազներ, փաստաբաններ, ոստիկանության ծառայողներ, սոցիալական աշխատողներ և լրագրողներ՝ կանանց նկատմամբ բռնության, ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության թեմաներով:

2018 թվականի ընթացքում ստացվել են ահազանգեր կանանց նկատմամբ բռնության, հատկապես ընտանիքում բռնության դեպքերի մասին, որոնք ըստ բնույթի կարելի է բաժանել հետևյալ խմբերի.



ՀՀ Ոստիկանության տվյալների համաձայն՝ 2018 թվականի 12 ամիսների ընթացքում արձանագրվել են.

Ընտանիքում բռնությունը հայտնի է որպես լատենտային բնույթ ունեցող բռնության տեսակ, ինչը նշանակում է, որ բռնության այս տեսակը քողարկված է, դժվար է հայտնաբերել, իսկ վիճակագրական ցուցանիշները չեն արտացոլում իրավիճակի իրական պատկերը:

- *Ընտանիքում բռնության 707 դեպք,*
- *Հարուցվել են քրեական գործեր 159 դեպքով,*
- *նյութեր են նախապատրաստվել 548-ով:*



✓ **Հարուցված քրեական գործերից.**

- *կարճվել են 130-ը,*
- *դատարան են ուղարկվել 29-ը:*

✓ **2018 թվականի ընթացքում բռնության դեպքերով կայացվել է.**

- *435 նախազգուշացման,*
- *132 անհետաձգելի միջամտության որոշումներ:*

✓ **Անարդյունավետ են գործում միակողմանի անհետաձգելի արգելող որոշման կայացումը՝**

- *միայն բռնություն գործադրած անձին հեռախոսով ծանուցելուց,*
- *նրա հաշվառման վայր էլեկտրոնային փոստի կամ պատվիրված փոստի միջոցով հանձնելուց և հանձնման մասին վերջինիս ստորագրություն ստանալուց հետո:*



✓ **Խնդրահարույց է, որ՝**

- *նախազգուշացում կիրառելու որոշումը բողոքարկվելու արդյունքում կասեցվում է, որի ընթացքում բռնություն գործադրած անձը կարող է*

խախտել նախազգուշացումը, որը բողոքարկման ընթացքում խախտում չի համարվի:

- ՀՀ օրենսդրությամբ կարգավորում չէ հետապնդումը, հարկադիր ամուսնությունը, հղիության արհեստական ընդհատմանը հարկադրելը:



Խնդիրներ են առաջանում նաև կանանց աշխատանքային իրավունքների իրացման առնչությամբ

Հաճախ հանդիպում են աշխատանքի հայտարարություններ, որտեղ աշխատանքի ընդունման հիմնական նախապայմանն է, օրինակ՝ կնոջ տարիքը կամ բարետես արտաքինը:

Որոշ դեպքերում խտրականության դրսևորման հետևանքով կնոջն աշխատանքի չեն ընդունում, և նախապատվություն է տրվում ավելի ցածր որակավորում ունեցող տղամարդ դիմորդին, մանավանդ սա նկատելի է երիտասարդ կանանց պարագայում, ում դեպքում գործատուները վախենում են կնոջ՝ մայրության արձակուրդի գնալու հավանականությունից:

Բացի այդ, դեռեւս առկա են կնոջը «հարիր» եւ «հարմար» աշխատատեղերի մասին հանրային կարծրատիպեր

Այսպես, կանանց թվաքանակը հատկապես մեծ է.

- կրթության,
- առողջապահության,
- բնակչության սոցիալական ապահովության,
- առեւտրի,
- մշակող արդյունաբերության ոլորտում:

Իսկ տղամարդկանցը՝

- պետական կառավարման,
- պաշտպանության,
- առեւտրի,
- մշակող արդյունաբերության,
- շինարարության ոլորտներում:

Առաջարկություններ.

- *Բարձրացնել կանանց իրազեկվածությունն իրենց իրավունքների և դրանց պաշտպանության առկա մեխանիզմների վերաբերյալ*
- *Մշակել և իրականացնել քարոզչական ծրագրեր (սոցիալական գովազդներ, պաստառներ, կարճամետրաժ ֆիլմեր), որոնք ուղղված կլինեն ընտանիքում բռնության կանխարգելմանը*
- *Նախատեսել ծրագրեր մայրության արձակուրդից վերադարձող կանանց՝ աշխատավայրում վերաինտեգրելու ուղղությամբ:*
- *Նախատեսել մեխանիզմներ երեխաների խնամքը նախադպրոցական ուսումնական հաստատություններում մինչև ծնողի աշխատանքային ժամի ավարտը կազմակերպելու համար:*

Հաջողված պատմություն

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ տեղեկություններ են ներկայացվել ամուսնու կողմից կնոջ բռնության ենթարկվելու մասին՝ խնդրելով Պաշտպանի աջակցությունը կնոջ իրավունքների պաշտպանության հարցում: Ահազանգով պայմանավորված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը դիմել են ՀՀ ոստիկանություն, որտեղ հայտնել են, որ բռնության ենթարկված անձը ներկայացել է ՀՀ ոստիկանության բաժին և հաղորդում ներկայացրել, որ ամուսինը, բռունցքներով հարվածելով, ծեծի է ենթարկել իրեն: Պաշտպանի աշխատակազմի առաջարկով՝ անվտանգության ապահովման նպատակով Ոստիկանությունը միջոցներ է ձեռնարկել բռնության ենթարկված կնոջն ապահով բնակելի տարածք տեղափոխելու համար:

Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներ

Համակարգային առումով դեռևս լուծված չէ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների խնդիրը: Ելնելով լայնորեն տարածված հասարակական կարծրատիպից, ամուսինները հաճախ նախապատվություն են տալիս տղա երեխաներին, ինչի պատճառով հղիությունը վաղաժամ ընդհատվում է, երբ պարզվում է երեխայի սեռը: Այս երևույթը կանանց նկատմամբ խտրականության դրսևորում է: Այդուհանդերձ, 2017 թվականի տվյալները վկայում են դրական տեղաշարժի մասին: Տղա և աղջիկ երեխաների միջև խախտված հավասարակշռությունը աստիճանաբար վերականգնվում է, որը երևում է հետևյալ աղյուսակից.



Առաջարկություններ

- Զանգվածային լրատվության միջոցներով, կրթական ծրագրերում համապատասխան ուղղություններ ներառելով, ինչպես նաև այլ միջոցներով՝ ընդգծել կնոջ՝ որպես որոշում կայացնողի, հասարակության լիիրավ անդամի:
- ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ մշակել և կիրառել պարտադիր բնույթ կրող մեխանիզմներ՝ վերահսկելու բուժաշխատողների կողմից հղիության 12-րդ շաբաթից հետո արհեստական ընդհատման ժամանակ բժշկասոցիալական ցուցիչների պահպանումը:

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ և ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Վիճակագրական տվյալներ

ՀՀ Միգրացիոն Պետական Ծառայության տվյալների համաձայն՝ 2018 թվականին Հայաստանի Հանրապետությունում ապաստան է հայցել 213 անձ, փախստականի կարգավիճակ է ստացել 73 անձ, իսկ մերժում ստացած ապաստան հայցող անձանց թիվը կազմում է 33:



ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ստացածները մեծամասամբ եղել են Իրաքից՝ 26 անձ: Թվաքանակով երկրորդը Սիրիայի քաղաքացիներն են՝ 212 անձ: Փախստականի կարգավիճակ են ստացել նաև Նիգերիայի, Իրանի, Ադրբեջանի, Թաիլանդի և Ուկրաինայի քաղաքացիներ:



Համակարգային խնդիրներ

«Փախստականների և ապաստանի մասին» օրենքում չվերադարձելիության սկզբունքն ամրագրող հոդվածում անհրաժեշտ է ներառել նաև մահապատժի ենթարկվելու վտանգի առկայության պարագայում անձի արտաքսման կամ հանձման արգելքը:

Անհրաժեշտ է օրենքով սահմանել կարճատև կացության կարգավիճակ այն օտարերկրացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց համար, ովքեր փախստականի կարգավիճակի համար անհրաժեշտ չափանիշներին չեն բավարարում, բայց միևնույն ժամանակ չեն կարող վերադարձվել կամ հանձնվել այլ երկիր, որտեղ հիմնավոր պատճառներով վտանգ կա, որ նրանք կենթարկվեն խոշտանգումների, անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի:

Անհրաժեշտ է ապաստանի հայցեր ընդունող բոլոր պետական մարմինների համար նախատեսել պարտավորություն, որ հարցազրույցի ընթացքում տրամադրեն անվճար թարգմանչական ծառայություններ:

Անհրաժեշտ է օրենքով սահմանել, որ միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելու և դադարելու դեպքում նրա ընտանիքի անդամների կամ խնամարկյալների կարգավիճակը կդադարի միայն դրա համար սահմանված անհատական վարույթով քննություն անցկացնելու և կարգավիճակը չեղյալ հայտարարելու ու դադարելու համար բավարար հիմքերի առկայության դեպքում:

Անհրաժեշտ է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում, որ առանց աշխատանքի թույլտվության աշխատելու իրավունք ունեցող անձանց ցանկում ավելացվեն նաև ապաստան հայցող անձինք:

Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները մշտադիտարկման այցեր են կատարել երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող 10 հաստատություն (այդ թվում՝ ոչ պետական): Բոլոր այցերը եղել են չհայտարարված:

2018 թվականի այցերի ընթացքում արձանագրվել են հետևյալ խնդիրները.

- **Մեկ հաստատությունում գտնվել են տարբեր խնդիրներ ունեցող երեխաներ, օրինակ՝ մտավոր թերզարգացում ունեցող ֆ ծնողազուրկ երեխաներ:**
- **Երեխաների մեծ մասի անձնական գործերում բացակայել են ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերը կամ դրանք ամբողջական չեն եղել:**
- **Հաստատությունների տարածքներում բացակայում են հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար անհրաժեշտ պայմաններ:**
- **Հաստատություններում բացահայտվել են խնդիրներ՝ կապված բուժծառայության, դեղամիջոցների պահպանման ու տրամադրման, սննդի նկատմամբ վերահսկողության հետ:**
- **Մի շարք հաստատություններում առկա են խնդիրներ կապված խոհանոցների սանիտարահիգիենիկ վիճակի, հացի պահպանման պայմանների, ճաշատեսակների նմուշների պահման, ճաշացանկերի հետ:**
- **Մի շարք հաստատություններում կրթահամալիրի սաների միջֆ տեղի են ունեցել բռնության, շահագործման, բուլինգի դեպքեր, բացակայում են բողոք ներկայացնելու կառուցակարգեր:**

Երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքը՝ այդ թվում բռնությունը

2018 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմը ստացել է դպրոցներում անձնակազմի կամ այլ երեխաների կողմից երեխայի նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերի վերաբերյալ բողոքներ, որոնք հիմնականում ներկայացվել են ծնողների կողմից: Պաշտպանի աշխատակազմը ճանաչողական այցեր է կատարել Հայաստանի տարբեր մարզեր և Երևանի տարբեր հաստատություններ, որոնց ընթացքում ստացել է ընդհանուր առմամբ 500 բողոքներ դպրոցում բռնության դեպքերի մասին:

Օրինակ

Մարզային դպրոցներից մեկի ուսուցիչը կարգադրել է երեխաներին մաքրել դպրոցի սանհանգույցները, տնօրենի և նրա տեղակալների աշխատասենյակները, որպես պատիժ իր բացակայության ժամանակ դասաժամին աղմկելու համար: Ներկայացված դեպքում ուսուցիչը ստացել է նկատողություն, սակայն երեխայի ծնողը որոշել է երեխային տեղափոխել այլ դպրոց:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից կարելի է եզրահանգել , որ դպրոցներում պատշաճ արձագանք չի տրվում ուսուցիչների կողմից երեխաների նկատմամբ հոգեբանական և ֆիզիկական բռնության դրսևորումներին կամ ստեղծվում է այնպիսի մթնոլորտ, որ երեխան այլևս չի կարողանում հաճախել այդ դպրոց, ինչն անթույլատրելի է երեխայի զարգացման, աշխարհընկալման և մի շարք հիմնարար իրավունքների իրացման տեսանկյունից:





Առաջարկություններ

- *երեխաներին մշտապես իրազեկել իրենց իրավունքների վերաբերյալ,*
- իրականացնել վերապատրաստումներ ուսուցիչների համար՝ երեխաների և ուսուցիչների իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով
- *ներդնել դրական ծնողավարության զարգացմանն ուղղված համայնքահեն ծրագրեր՝ ընտանիքում բռնության կանխարգելման նպատակով:*

Երեխաների միջև բռնությունը հաստատություններում (բուլինգ)

Մարդու իրավունքների պաշտպանը արձանագրել է հաստատություններում երեխաների միջև բռնության դեպքեր, որը Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի Թիվ 13 ընդհանուր մեկնաբանության 27-րդ կետում մեկնաբանվում է հետևյալ կերպ.

«Երեխաների միջև բռնություն». Դա ներառում է ֆիզիկական, հոգեբանական և սեռական բռնությունը, հաճախ ահաբեկելու միջոցով, որն իրականացվում է երեխաների կողմից այլ երեխաների դեմ՝ հաճախ երեխաների խմբի կողմից: Այն ոչ միայն վնասում է երեխայի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությանն ու բարեկեցությանը, այլ նաև բացասաբար է անդրադառնում նրա զարգացման, կրթության և սոցիալական ինտեգրման վրա: Նույն կետում նշվում է նաև, որ չնայած երեխաներն են դա իրականացնում, այնուամենայնիվ, նրանց համար պատասխանատու մեծահասակների դերը կարևոր է յուրաքանչյուր դեպքում՝ պատշաճ կերպով դրանց արձագանքելու և բռնությունը կանխարգելելու, ապահովելու, որպեսզի բռնության դեպքերը չկրեն պատժիչ բնույթ և չկիրառվի բռնություն բռնության դեմ:

Օրինակ

Արձանագրվել են կրթահամալիրի սաների միջև ֆիզիկական բռնության, միմյանց հարվածներ հասցնելու, ինչպես նաև անձի կոնֆլիկտայնության և մերկ մարմինն ի ցույց դնելու երևույթներ, սակայն շատ դեպքերում դայակները նույնիսկ չէին էլ նկատում դրանք, իսկ սաներն իրենք էին փորձում հարթել մյուսների կոնֆլիկտները, միջամտել բռունցքով կամ կոշիկով իրար փոխադարձ հարվածներ հասցնողներին: Ավելին, փարիքով ավագ սաներն իրենց հեղինակային հրամայական խոսքով հանդարտեցնում էին իրավիճակը և վստահեցնում, որ սովորական երևույթ է: Ստացվում է, որ այցի ընթացքում տեղի ունեցած միջադեպի ընթացքում սաների կողմից փորձ չարվեց նույնիսկ նման իրավիճակում կանչել դաստիարակներին միջադեպը հարթելու համար՝ այդ ամենն իրականացնելով սեփական ուժերով, վստահեցնելով, որ իրենք սովոր են և իրենց ավելի լավ են լսում:

Առաջարկություններ

- Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հաստատություններում խնամվող անձանց հանդեպ և նրանց միջև հնարավոր բռնության դեպքերը բացառելու համար: Ներկայացնել նման կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմ,
- Հաստատություններում վարել սաների հանդեպ և նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումների գրանցամատյան,
- Հաստատություններում խնամվող երեխաների՝ իրենց ընտանիքի անդամների և այլ անձանց հետ կապն ապահովելու, այդ թվում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թեժ գծին զանգահարելու նպատակով՝ տեղադրել հեռախոս ու ապահովել հեռախոսակապի հասանելիությունը:

Մանկական աղքատության հիմնախնդիրը

Երեխաների աղքատության վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացված են ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2017 թվականի վիճակագրական վերլուծական զեկույցում: Ըստ ներկայացված տվյալների՝ 2018 թվականին ընտանեկան նպաստ է ստացել միջինը՝ շուրջ 71224 ընտանիք, որտեղ մինչև 18 տարեկան անդամների միջին թիվը կազմում է շուրջ 166567:

Ըստ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2017 թվականի զեկույցի՝ 2017 թվականին մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող տնային տնտեսությունների 22.7%-ը ստացել է ընտանեկան նպաստ: Ընտանեկան նպաստ ստացել է աղքատ տնային տնտեսությունների 38.1%-ը, ծայրահեղ աղքատների՝ 55.3%-ը և ոչ աղքատների՝ 15.9%-ը:



Նշված վիճակագրական տվյալներից երևում է, որ խնդիրը դեռևս չի լուծվել և դարձել է վերջին տարիներին երեխաների իրավունքների պաշտպանության լրջագույն մարտահրավերներից մեկը: Պետությունը պետք է անհապաղ քայլեր իրականացնի մանկական աղքատության կրճատման վերացման ուղղությամբ:

Առաջարկություններ

- *Բարձրացնել բնակչության իրազեկվածությունը գործող սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ:*
- *Մշակել թիրախային աջակցության ծրագրեր՝ հաշվի առնելով երեխաների աղքատության ցուցանիշներն՝ ըստ մարզերի:*
- *Բարեփոխել ընտանեկան նպաստի գործող համակարգը՝ բարձրացնելով ծայրահեղ աղքատ և աղքատ ընտանիքների ընդգրկվածության մակարդակը:*



ՏԱՐԵՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Տարեցներն իրենց իրավունքներն իրացնելիս բախվում են տարաբնույթ խնդիրների, կենսաթոշակների, առողջապահության մատչելիության, տարիքային խտրականության, խնամքի հարցում աջակցության և տարեցների նկատմամբ բռնություն գործադրելու հարցերում:

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը մշտադիտարկել է տարեց անձանց խնամքի և պաշտպանությամբ զբաղվող պետական և ոչ պետական հաստատությունները



Ազգային օրենսդրության մեջ բացակայում են տարեց անձանց իրավական պաշտպանության իրավական մեխանիզմներ

Օրենսդրությամբ հստակեցված չէ, թե տարիքային որ խմբին պատկանող անձը կարող է համարվել տարեց, որ որոշակի տարիքին հասած անձինք դուրս չմնան սոցիալական տարբեր ծառայություններից օգտվելու հնարավորությունից

Հաստատություններ շենքային պայմանները հարմարեցված չեն հենաշարժողական խնդիրներ ունեցող տարեցների համար

Պաշտպանի ներկայացուցիչները տուն-ինտերնատներ կատարած այցերի արդյունքում արտաքին աշխարհի հետ ունեցած կապի տեսանկյունից արձանագրել են խնդիրներ:

Օրինակ

«Վանաձորի տարեցների տուն» հասցեատության պահակակետում տեղադրված է եղել մեկ հեռախոս, որից կարող էին օգտվել խնամյալները, սակայն կատարել միայն միջքաղաքային զանգեր: Խնամյալները շենքի ներսում չեն կարող օգտվել բջջային հեռախոսից, քանի որ բջջային ծածկույթը գրեթե բացակայում է, առկայության դեպքում էլ՝ շատ թույլ է

Առաջարկություններ.

Տարեցների իրավական պաշտպանության առումով առաջարկվում են հետևյալ փոփոխությունները

- Ապահովել տարեցների պաշտպանութան միջազգային նորմերի ու սկզբունքների առկայությունն ազգային օրենսդրության մեջ:
- Տարեցների խնամքի հաստատություններում ապահովել լոգարանների, սանհանգույցների, ճաշարանների, սանիտարահիգիենիկ պատշաճ պայմանները,
- Իրենց ընտանիքի անդամների հետ կապն ապահովելու, այդ թվում՝ պաշտպանի աշխատակազմի թեժ գծին զանգահարելու նպատակով հաստատություններում տեղադրել հեռախոս:
- Հաստատությունների շենքային պայմաններն ամբողջական հարմարեցնել հենաշարժողական խնդիրներ ունեցող տարեցների համար
- Ապահովել սանհանգույցերն ու լոգարանները համապատասխան օժանդակ հարմարանքներով՝ սահելուց խուսափելու նպատակով :
- Հաստատություններում տեղադրել տարեցների համար մատչելի բողոքարկման արկղ, սահմանելով դրանք բացելու, հաշվառելու ընթացակարգ: Արկղի վրա փակցնել դիմում-բողոքներ գրելու վերաբերյալ տեղեկություն:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Հաշմանդամություն ունեցող մարդկանց համար ֆիզիկական մատչելի միջավայրի ապահովումն առաջնային է նրանց կողմից իրենց իրավունքներից ինքնուրույն օգտվելու տեսանկյունից:

Մատչելիություն պետք է ապահովել՝
1. հաշմանդամություն ունեցող անձանց, ներառյալ
- տեղաշարժման,
- տեսողական,
- լսողական
- և այլ խնդիրներ ունեցող անձանց,

2. հաշմանդամություն չունեցող անձանց համար:

Մատչելիությունը ներառում է.

- շինությունների մատչելիությունը,
- մայթեզրերի հարմարեցումը
- հետիոտների շարժը սահմանափակող այլ խոչընդոտների վերացումը
- տեղեկությունների մատչելիությունը
- շենքի ներսում տեղաշարժը եւ ենթակառուցվածքների օգտվելու հարմարեցումը
- միջմարզային եւ քաղաքային տրանսպորտային միջոցներում անհրաժեշտ պայմաններ

Հաշմանդություն ունեցող անձանց կրթության իրավունքի ապահովման համար անհրաժեշտ է շարունակական համակարգային միջոցառումներ իրականացնել

- դպրոցների, համալսարանների ֆիզիկական մատչելիության,
- կրթության եւ ուսումնական ծրագրերի բովանդակային մատչելիության
- ուսուցիչների շարունակական վերապատրաստման ապահովման ուղղությամբ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Աշխատանքային իրավունքներ

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված աշխատանքային իրավունքների խախտումների մասին բողոքներում վեր են հանվել հետևյալ համակարգային խնդիրները.

- ✓ *գործատուների կողմից վերջնահաշվարկի չկատարում,*

- ✓ *աշխատանքից աշխատողի անհիմն ազատում կամ կարգապահական տույժերի կիրառում,*
- ✓ *ամենամյա արձակուրդի սխալ հաշվարկի կիրառում,*
- ✓ *աշխատողի ժամանակավոր անաշխատունակության վիճակում գտնվելու պայմաններում ժամանակավոր անաշխատունակության թերթիկը գործատուին ներկայացնելու կարգի և ժամկետների վերաբերյալ կարգավորումների բացակայություն,*
- ✓ *առանց աշխատողի համաձայնության նրան այլ աշխատանքի փոխադրում,*

Առաջարկություններ

- Սեղմ ժամկետներում ՀՀ աշխատանքային օրենսգրքում և ոլորտի այլ իրավական ակտերում կատարել համապատասխան փոփոխություններ, որոնց հիման վրա կստեղծվի արտադատական մարմին, որը կունենա աշխատանքի պայմանների, աշխատողների աշխատանքային ազատությունների և իրավունքների պահպանման ու պաշտպանության ապահովման, աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի խախտումների վերացման ու կանխարգելման նկատմամբ վերահսկողության իրականացման իրավասությունը,
- Զանգվածային լրատվության միջոցներով շարունակել հասարակությանն իրազեկել աշխատանքային իրավունքների և դրանց պաշտպանության ուղիների վերաբերյալ:

Առողջության պահպանման իրավունք

2018 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքներով բարձրացվել է ոլորտում առկա օրենսդրական անկատարությունների հարցը: Մասնավորապես՝ բարձրացվել է բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգն օրենքով չսահմանելու հետևանքով առողջության պահպանման իրավունքի ոչ լիարժեք ապահովման հարցը:

Բողոքներով բարձրացվել է առողջապահության բնագավառի իրավական ակտերի հասանելիության և մատչելիության խնդիրը:

Շարունակում է չլուծված մնալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից տարիներ շարունակ բարձրաձայնվող **պացիենտների նկատմամբ խտրական վերաբերմունքի խնդիրը:**

Նման վերաբերմունքի հետևանքով մի շարք անձիք ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով, ինչպես նաև Հեպատիտ B, չեն ստանում պատշաճ բժշկական օգնություն կամ հաճախ մարդիկ ուղղակի հրաժարվում են դիմել բժշկական օգնության ծառայությունների՝ պայմանավորված բժշկական հաստատություններում տարբերակված վերաբերմունքի դրսևորումներով:

Որոշ դեպքերում հենց բուժաշխատողներն են հրաժարվում ծառայություն մատուցել անձանց՝ պայմանավորված նրանց մոտ որոշակի հիվանդության առկայությամբ (օրինակ՝ Հեպատիտ B կամ C):

Շարունակում է խնդրահարույց մնալ **բժշկական գաղտնիքի պահպանության** համար օրենսդրական երաշխիքների բացակայությունը, ինչը տարիներ շարունակ բարձրաձայնվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդումներում:

Դեղերի ձեռքբերման հետ կապված որոշ հիմնահարցեր

2018 թվականին ևս շարունակվել է չլուծված մնալ օրենսդրության թերի կարգավորումների հետևանքով փոստային առաքմամբ այլ երկրից դեղերի առաքման անհնարինության հարցը, որի վերաբերյալ Պաշտպանը ստացել է բողոքներ:

Խնդիրն այն է, որ ֆիզիկական անձինք նույն դեղամիջոցը կարող են այլ երկրից ՀՀ փարածք ներմուծել անձամբ, իսկ նույն դեղամիջոցը փոստային առաքման միջոցով առաքելը հնարավոր չէ իրականացնել:

Տարիներ շարունակ Պաշտպանը բարձրացրել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց «Զիպրեքսա» դեղամիջոցի փոխարեն «Օլանզապին» դեղամիջոցը տրամադրելու հարցը: Խնդիրը շարունակել է արդիական մնալ նաև 2018 թվականին:

Ստուգումների գործընթացի թափանցիկության ապահովումը

2018 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարկային և մաքսային ոլորտում առանձնակի կարևորություն ունի տեսչական ստուգումների բարելավումը:

Որքան բարձր է հարկային և մաքսային վարչարարությունը, այնքան հարկային մուտքերը կանխատեսելի և հավաքագրվող են, տնտեսավարող սուբյեկտները գրանցվում և հաշվառվում են հարկային մարմինների կողմից, հարկային ծառայողների և հարկ վճարողների միջև չեն առաջանում կոռուպցիոն հարաբերություններ:

Առաջարկություն

Ստուգումների գործընթացի թափանցիկությունն ապահովելու, կոռուպցիայի, անհամաչափ վարչարարության բացառման նպատակով քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների հետ անմիջական շփում ունեցող հարկային և մաքսային տեսուչների համազգեստի վրա տեղակայել դյուրակիր տեսախցիկներ:

Ապրանքի մաքսազերծումը գործարքի գնի մեթոդով

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ բարձրաձայնել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային մարմնի կողմից ապրանքի գործարքի գնի մեթոդով մաքսազերծումն անհիմն մերժելու և դրա արդյունքում առաջացած մի շարք խնդիրների մասին:

Խնդրի առնչությամբ 2018 թվականին ևս բողոքներ են ստացվել, որոնց ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ գործնականում հաճախ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային մարմնի կողմից տրանսպորտային միջոցների ձեռքբերման գնով մաքսազերծումը մերժվում է, և որպես քննարկվող մեթոդի կիրառմամբ մաքսազերծման մերժման պատճառաբանություն՝ նշվում է փաստաթղթերում առկա ոչ էական, շտկելի թերությունների առկայությունը, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի արժանահավատության վերաբերյալ մաքսային մարմնի ունեցած կասկածները:

Առաջարկություն

Ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործման և գործնականում դրա պատշաճ կիրարկումն ապահովող քայլերի ձեռնարկման միջոցով ստեղծել գործուն մեխանիզմներ, որպեսզի ապահովվի անհիմն պատճառներով գործարքի գնի մեթոդով մաքսազերծման իրականացման մերժման բացառումը: